



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Մարտունի, Ծախամյան 2,

Հեռ. 060-74-34-01

№ 785

02 նոյեմբեր 2020 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ն.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան.

<< Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից էլնելով ուղարկվում են Մարտունի համայնի ղեկավարի կողմից 26.10.2020 -30.10.2020թ. ընդունված որոշումները :

Առդիր ' 2 թերթ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ*

Գատարող ' Ռ. Մանուկյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 293 -Ա

30 հոկտեմբերի 2020 թվական

**ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ 05-003-120-071 ԵՎ 05-003 -119-076 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Մարտունի քաղաքի բնակիչ Ջոհրակ Բաղդասարի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից (սեփականության վկայական N°1511448 , տրված 01.11.2004 թվականին) և (սեփականության վկայական N°1592031 , տրված 01.11.2004 թվականին) հրաժարվելու մասին 21.10.2020 թվականին տրված թիվ 891 դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ջոհրակ Բաղդասարի Մելքոնյանին (անձնագիր՝ AN0312330 տրված՝ 27.12.2012 թվականին 043-ի կողմից, բնակության վայրը՝ քաղաք Մարտունի, Արուսյան փողոց տուն 42), Գոհար Անդրանիկի Մելքոնյանին (նույնականացման քարտ 001312891, տրված 15.11.2017 թվականին 043-ի կողմից), Լիաննա Ջոհրակի Մելքոնյանին (անձնագիր՝ AR0525869 տրված՝ 30.11.2017 թվականին 043-ի կողմից, բնակության վայրը՝ քաղաք Մարտունի, Կարապետյան փողոց տուն 42) և Գևորգ Ջոհրակի Մելքոնյանին (նույնականացման քարտ 006144539, տրված 15.11.2017 թվականին 043-ի կողմից) սեփականության իրավունքով պատկանող 05-003-120-071 ծածկագրով 0,219 հա մակերեսով վարելահողը և 05-003 -119-076 ծածկագրով 0.055 հա մակերեսով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին 15-օրյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության Անշարժ Գույքի Կադաստրի Կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանում սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի վկայականը ստանալուց հետո համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի պետ Հ. Մնացականյանին հողամասը ընդունել Մարտունի համայնքի հողային հաշվեկշիռ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

30 հոկտեմբերի 2020 թվական
Ք.Մարտունի



ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ